Հավելված N 1
ՀՀ կառավարության 2024 թվականի
հունիսի 20-ի N 956 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂ-ՆԵՐԻ՝ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁԱԾ ՆՎԵՐՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների՝ պետական սեփականություն դարձած նվերների տնօրինման, դրանից բխող գործողությունների իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Գույքը տնօրինելու համար Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեն (այսուհետ՝ կոմիտե) ապահովում է՝

1) գույքի տեղափոխումը և ժամանակավոր պահպանությունը կոմիտեի, գույքը նվեր ստացած կամ այլ պետական մարմնի՝ տվյալ գույքը պահելու համար հատուկ հարմարեցված վայրում.

2) ըստ անհրաժեշտության՝ գույքի կամ դրա խմբաքանակի մասնատումը, փաթեթավորումը, վերափաթեթավորումը և գույքի պատշաճ պահպանության համար անհրաժեշտ այլ գործողությունների կատարումը:

3. Կոմիտեն «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա պետության սեփականություն դարձած և Կոռուպցիայի կան-խարգելման հանձնաժողովի կողմից սահմանված կարգով պետությանը հանձնված նվերների տնօրինման նպատակով սույն հավելվածի 15-րդ կետով սահմանված ժամկետում կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) գույքը նվեր ստացած հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի օգտագործմանը թողնելու մասին՝ որոշակի ժամկետով, սակայն ոչ ավելի,

քան մինչև վերջինիս պաշտոնից ազատվելը կամ ծառայությունը դադարեցնելը, կամ համապատասխան պետական մարմնի օգտագործմանը հանձնելու մասին.

2) մշակութային արժեք համարվող գույքը պետական կամ համայնքային թանգարաններին կամ ազգային գրադարանային հավաքածուին հանձնելու մասին.

3) շուտ փչացող գույքը, կենդանիները, պահպանման էական ծախսեր պահանջող գույքն անհապաղ իրացնելու կամ սույն որոշմամբ սահմանված այլ եղանակով տնօրինելու մասին.

4) շուտ փչացող գույքը սույն որոշման N 3 հավելվածով սահմանված դեպքերում և կարգով ոչնչացնելու մասին.

5) գույքը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի N 587-Ն որոշմամբ սահմանված կարգով հրապարակային սակարկություններով իրացնելու մասին.

6) գույքը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N 1067-Ն որոշմամբ սահմանված կարգով նվիրաբերելու մասին.

7) թանկարժեք մետաղները և թանկարժեք քարերը Հայաստանի Հանրապետության թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի ազգային պահուստում «Թանկարժեք մետաղների մասին» օրենքով սահմանված կարգով հաշվեգրելու առաջարկով լիազոր մարմին դիմելու մասին:

4. Կոմիտեն «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 9-րդ մասի հիման վրա պետության սեփականություն դարձող նվերների տնօրինման նպատակով կայացնում է սույն հավելվածի 3-րդ կետի 3-6-րդ ենթակետերով սահմանված որոշումներից մեկը:

5. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից սահմանված կարգով հանձնված՝ պետական սեփականություն դարձած նվերը պետական սեփականություն համարվելու և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից սահմանված կարգով կոմիտեին հանձնվելու օրվանից հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում կոմիտեն այն ի պահ է հանձնում նվերն ստացած պետական մարմնին՝ մինչև սույն կարգի 3-րդ կետով սահմանված որոշման

կայացումը, որի վերաբերյալ կազմվում է սույն որոշման N 2 ձևով սահմանված արձանագրություն: Գույքը ժամանակավոր պահպանության չի հանձնվում այն նվեր ստացած պետական մարմնին, եթե այդ մարմինը չունի տվյալ գույքը պահպանելու համար անհրաժեշտ տարածք կամ պայմաններ:

6. Սույն հավելվածի 5-րդ կետի հիման վրա նվերն ստացած պետական մարմնին ի պահ չեն կարող հանձնվել սույն որոշման N 4 հավելվածով սահմանված շուտ փչացող գույքերը, կենդանիները, պահման առանձնահատուկ պայմաններ պահանջող գույքը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ մարմինն ունի այդ խումբ գույքերը պահպանելու համար անհրաժեշտ բոլոր պայմանները և համաձայնում է պահպանության ընդունել գույքը: Կոմիտեին նման գույք հանձնվելու դեպքում վերջինս անհապաղ, բայց ոչ ուշ, քան գույքն իրեն հանձնվելու հաջորդ օրը կազմակերպում է գույքի ժամանակավոր պահպանությունը՝ մինչև սույն հավելվածի 3-րդ կետով սահմանված որոշումներից որևէ մեկը կայացնելը: Այն դեպքում, երբ սույն կետով նշված գույքի պահպանման համար անհրաժեշտ պայմաններ կամ հատուկ առանձնացված տարածք ունի կոմիտեից զատ որևէ այլ պետական մարմին, ապա կոմիտեն իրավասու է սույն կետում նշված գույքը ժամանակավոր պահպանության հանձնել այդ պետական մարմնին՝ մինչև սույն հավելվածի 3-րդ կետով սահմանված որոշումներից որևէ մեկը կայացնելը, որի վերաբերյալ կազմվում է սույն որոշման N 2 ձևով սահմանված արձանագրություն:

7. Գույքի ժամանակավոր պահպանության վայր է համարվում կոմիտեի՝ գույքի ժամանակավոր պահպանության համար հատուկ հարմարեցված վայրը, առանձնացված համապատասխան տարածքը կամ այն պետական մարմնի տարածքը, որն ունի տվյալ տեսակի գույքի պահպանման պայմաններ և որտեղ ժամանակավոր պահատվության է հանձնվել գույքը:

8. Կոմիտեի ղեկավարն անհապաղ, բայց ոչ ուշ, քան գույքը կոմիտեին հանձնվելուն հաջորդող օրը, դիմում է սույն որոշման 4-րդ կետով սահմանված մարմիններին (այսուհետ՝ լիազոր մարմին)՝ գույքի պահպանության վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն ստանալու համար, եթե՝

1) սույն որոշման N 3 հավելվածի 2-րդ կամ 3-րդ կետերով սահմանված կարգով ստացվել է տեղեկություն այդ գույքի՝ առերևույթ սույն որոշման N 4 հավելվածով նախատեսված շուտ փչացող գույք հանդիսանալու վերաբերյալ, կամ այդ տեղեկատվությունը պարզել է կոմիտեն՝ գույքն իրեն հանձնվելուց հետո.

2) սույն որոշման N 3 հավելվածի 2-րդ կետով սահմանված կարգով ստացվել է տեղեկություն այդ գույքի՝ առերևույթ պահպանման հատուկ պայմաններ (խոնավության, չորության կամ ջերմաստիճանի որոշակի ռեժիմի պահանջ և այլն) ենթադրելու կամ դյուրավառ, շրջակա միջավայրին վնաս պատճառող գույք հանդիսանալու վերաբերյալ, կամ այդ տեղեկատվությունը պարզել է կոմիտեն՝ գույքն իրեն հանձնվելուց հետո.

3) հանրային ծառայողի կամ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից նվեր է ստացվել և «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության սեփականությունն է դարձել կենդանի:

9. Կոմիտեի կողմից լիազոր մարմնին ներկայացված դիմումը ներառում է՝

1) գույքի անվանումը.

2) գույքի տեսակը (հնարավորության դեպքում՝ հղում սույն որոշման N 4 հավելվածով սահմանված գույքի տեսակին).

3) գույքի քանակը, ծավալը.

4) գույքի նկարագիրը (վիճակը, բաղադրություն, փաթեթավորում, այլ բնութագրիչներ).

5) հարցերը, որի վերաբերյալ ակնկալվում է մասնագիտական խորհրդատվություն՝ տվյալ գույքի տեղափոխման, տեղափոխման կազմակերպման, գույքի պահման պայմանների, ձևի և ժամկետների վերաբերյալ:

10. Կոմիտեի կողմից լիազոր մարմին ներկայացվող դիմումին կցվում են նաև գույքի նկարները:

11. Լիազոր մարմինը, ստանալով դիմումը, անհրաժեշտության դեպքում, կարող է իրականացնել գույքի ուսումնասիրությունը դրա՝ տվյալ պահին գտնվելու վարում, որից հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան դիմումն ստանալուն հաջորդող օրը, ներկայացնում է մասնագիտական խորհրդատվություն՝ մինչև տեղափոխումը

գույքը դրա գտնվելու վայրում պահելու կանոնների, գույքի տեղափոխման, տեղափոխումը կազմակերպելու, գույքի պահպանության պայմանների, ձևի, ժամկետների վերաբերյալ:

12. Լիազոր մարմնի մասնագիտական խորհրդատվությունն ստանալով՝ կոմիտեն անմիջապես գույքը տվյալ պահին գտնվելու վայրի մարմնի գլխավոր քարտուղարին կամ այլ հավասարազոր պաշտոնատար անձին տեղեկացնում է գույքի՝ մինչև տեղափոխումը պահպանելու կանոնների վերաբերյալ, իսկ եթե գույքն արդեն հանձնվել է կոմիտե, մասնագիտական խորհրդատվության համաձայն ապահովում է գույքի պահպանությունը:

13.Կոմիտեի կողմից գույքն այլ պետական մարմնի հանձնելու կամ կոմիտեի կողմից ի պահ ընդունվելու, գույքի տեղափոխումն իրականացնելու կամ կազմակերպելու, գույքը ժամանակավոր պահպանելու կամ գույքը ժամանակավոր պահատվության հանձնելու վերաբերյալ կազմվում է համապատասխան արձանագրություն՝ սույն որոշման N 2 ձևի համաձայն:

14. «Պետական արարողակարգի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով սահմանված գույքը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից սահմանված կարգով կոմիտեին հանձնվելու դեպքում կոմիտեն այդ գույքն իրեն հանձնվելուց հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան այդ գույքն իրեն հանձնվելու օրվան հաջորդող աշխատանքային օրը գրություն է ներկայացնում Պետական արարողակարգի ծառայություն (այսուհետ՝ ծառայություն)՝ գույքի տնօրինման վերաբերյալ եզրակացություն ներկայացնելու խնդրանքով:

15.Գույքի տնօրինման եղանակի վերաբերյալ որոշումը կոմիտեն կայացնում է ոչ ուշ, քան գույքն իրեն հանձնվելու օրվան հաջորդող յոթերորդ աշխատանքային օրը՝ բացառությամբ սույն որոշման N 3 հավելվածով սահմանված դեպքերի: Կոմիտեն գույքի տնօրինման եղանակի վերաբերյալ որոշումը կայացնում է՝ «Պետական արարողակարգի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով սահմանված դեպքերում հիմք ընդունելով ծառայության եզրակացությունը, իսկ սույն որոշմամբ սահմանված դեպքերում՝ նաև լիազոր մարմնի մասնագիտական խորհրդատվությունը:

16. Այն դեպքում, երբ գույքի տնօրինման եղանակի վերաբերյալ որոշման կայացումը պահանջում է համապատասխան մասնագիտացված գիտելիքներ, ինչպես նաև, երբ գույքի օգտագործման նպատակային նշանակության, դրա իրացման եղանակի ընտրության նպատակով առկա է ոլորտում մասնագիտացված մարմնի խորհրդատվության անհրաժեշտություն, կոմիտեն, իսկ «Պետական արարողակարգի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով սահմանված դեպքերում՝ ծառայությունը, ոչ ուշ, քան, համապատասխանաբար, գույքը կոմիտեին հանձնվելու կամ ծառայության կողմից կոմիտեի՝ գույքի տնօրինման եղանակի վերաբերյալ եզրակացություն ներկայացնելու մասին դիմումն ստացվելու օրվան հաջորդող օրը, դիմում է սույն որոշման 4-րդ կետով սահմանված լիազոր մարմնին՝ մասնագիտական խորհրդատվություն ստանալու համար:

17.Լիազոր մարմնին ներկայացված դիմումի մեջ լրացվում են՝

1) գույքի անվանումը.

2) գույքի տեսակը.

3) գույքի քանակը, ծավալը.

4) գույքի նկարագիրը (վիճակը, բաղադրություն, փաթեթավորում, այլ բնութագրիչներ).

5) գույքը՝ «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով սահմանված նվերն ստանալու հանգամանքների, իրավիճակի նկարագրությունը, նվիրող կողմի վերաբերյալ հասանելի տեղեկատվությունը՝ ըստ անհրաժեշտության.

6) գույքը որպես նվեր ստացած անձի անունը, ազգանունը, պաշտոնը.

7) դիմումով հայցվող խորհրդատվության պահանջը՝ գույքի օգտագործման նպատակային նշանակության, գույքի տնօրինման՝ օրենքով սահմանված եղանակների կամ դրանցից որևէ մեկի կիրառման անհրաժեշտության կամ հնարավորության, գույքի օգտագործման հատուկ պայմանների և խնամքի վերաբերյալ (եթե այդպիսիք ենթադրվում են).

8) գույքի ժամանակավոր պահման վայրի, ձևի և պայմանների վերաբերյալ տեղեկությունները:

18. Դիմումին կցվում են գույքի նկարը (նկարները), ինչպես նաև նվերների հաշվառման ռեեստրում նվերի վերաբերյալ գրանցված տեղեկատվության վերաբերյալ քաղվածքը, եթե լիազոր մարմինն էլեկտրոնային հասանելիություն չունի նվերների հաշվառման ռեեստրում գրանցված համապատասխան տեղեկատվությանը, ինչպես նաև գույքի ժամանակավոր պահպանության ընդունելու կամ հանձնելու վերաբերյալ կազմված արձանագրությունը:

19. Լիազոր մարմինը, ոչ ուշ, քան երկու աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնում է մասնագիտական խորհրդատվություն՝ մինչ այդ, ըստ անհրաժեշտության, իրականացնելով գույքի գտնվելու վայրում դրա ուսումնասիրություն:

20. Լիազոր մարմնի կողմից տրվող մասնագիտական խորհրդատվությունը ներառում է՝

1) գույքի տեսակը, գույքի մանրամասն նկարագրությունը՝ հնարավորության դեպքում արտադրման տարեթիվը, արտադրող (թողարկող) կազմակերպությունը (եթե հայտնի է կամ հնարավոր է նույնականացնել), արտադրման (թողարկման) նպատակը (եթե այն հանդիսանում է կոնկրետ, անվանական կամ հատուկ շարքին դասվող արտադրանք կամ թողարկում).

2) մշակութային արժեք համարվող գույքի դեպքում՝ հեղինակի, ստեղծման, ստեղծման հանգամանքների վերաբերյալ տեղեկություններ.

3) գույքի շուկայական արժեքը (եթե դա հնարավոր է գնահատել).

4) գույքի նպատակային նշանակության վերաբերյալ տեղեկություններ.

5) գույքի պահպանման կամ հատուկ խնամքի (եթե այդպիսիք պահանջվում են) և գույքի պատշաճ պահպանությունն ապահովող այլ գործողությունների վերաբերյալ տեղեկություններ.

6) գույքի տնօրինման՝ սույն հավելվածի 3-րդ կետով սահմանված եղանակի վերաբերյալ առաջարկություն:

21. Այն դեպքում, երբ գույքն առերևույթ սույն որոշման N 3 հավելվածով սահմանված կարգով ոչնչացման ենթակա գույք է, լիազոր մարմինն իր եզրակացությամբ առաջարկում է ոչնչացնել գույքը՝ նշելով՝

1) գույքի ոչնչացման հատուկ մասնագիտական գիտելիքներ պահանջվելու դեպքում՝ այն մասնագետին կամ մասնագիտացված իրավաբանական անձին, ում մասնակցությունն անհրաժեշտ է գույքի ոչնչացման գործընթացում.

2) գույքի ոչնչացման համար անհրաժեշտ ժամանակը, ոչնչացման եղանակը՝ այրում, պայթեցում, կտրտում, աղբի վերածում կամ ոչնչացման այլ եղանակ.

3) գույքի ոչնչացման համար անհրաժեշտ վայրը, մասնագիտացված գործիքների կամ տեխնիկայի օգտագործման անհրաժեշտության վերաբերյալ տեղեկություններ.

4) գույքի կամ դրա բաղադրիչների վտանգավոր հատկությունները (թունավոր, հրդեհավտանգ, պայթյունավտանգ, կոռոզիոն ակտիվ).

5) գույքի ոչնչացման համար անհրաժեշտ ծախսը (եթե ենթադրվում է):

22. Կոմիտեն, իսկ «Պետական արարողակարգի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով սահմանված դեպքերում՝ ծառայությունը, ոչ ուշ, քան, համապատասխանաբար, գույքը կոմիտեին հանձնվելու կամ սույն հավել-վածի 16-րդ կետով սահմանված գրությունը ծառայության կողմից ստացվելուն հաջորդող օրը գրություն են ուղարկում նաև գույքը նվերն ստացած պետական մարմնի գլխավոր քարտուղարին կամ այլ հավասարազոր պաշտոնատար անձին՝ նվերի տնօրինման վերաբերյալ առաջարկություն ներկայացնելու համար, ինչի հիման վրա վերջինիս առաջարկությունը ներկայացվում է ոչ ուշ, քան գրությունը ստանալուն հաջորդող օրը: Սույն կետով սահմանված առաջարկությունը կարող է ներկայացվել նաև գույքը կոմիտեին Կոռուպցիայի կանխարգելման հանձնա-ժողովի կողմից սահմանված կարգով հանձնելու հետ միաժամանակ:

23. Լիազոր մարմնի կողմից մասնագիտական խորհրդատվությունը, «Պետա-կան արարողակարգի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով սահմանված դեպքերում՝ ծառայության եզրակացությունն ստանալուց հետո կոմիտեն ոչ ուշ, քան երկու աշխատանքային օրվա ընթացքում կայացնում է գույքի տնօրինման եղանակի ընտրության վերաբերյալ սույն հավելվածի 3-րդ կետով սահմանված որոշում:

24. Գույքի տնօրինման գործընթացում գույքի արժեքի գնահատման անհրաժեշտություն առաջանալու, սակայն գույքի արժեքը «Գնահատման գործունեության մասին» օրենքով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ կարգով որոշելու անհնարինության դեպքում կոմիտեն որպես գույքի արժեք իրավասու է հիմք ընդունել նվերների հաշվառման ռեեստրում հաշվառված արժեքը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

25.06.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ